ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի Եղիշե Չարենց, Վահան Տերյան Մարտին Միքայելյան, Ազատամարտիկների, Մեսրոպ Մաշտոցի և Էներգետիկների փողոցների ջրագծերի փոխարինման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ՀԲՄԾՁԲ-23/107 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունվարի 23-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ՀԲՄԾՁԲ-23/107 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի փետրվարի 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ Մեծամորի համայնքապետարանի և «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2024 թվականի փետրվարի 21-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է ծառայության դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2024 թվականի փետրվարի 21-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2024 թվականի հունվարի 23-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ՀԲՄԾՁԲ-23/107 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայության մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**